

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Թիկնագորային (պահնորդական) գործունեության մասին

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է թիկնագորային (պահնորդական)(այսուհետ՝ թիկնագորային) գործունեության կազմակերպման եւ իրականացման կարգը, նշված գործունեության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, կարգավորում է թիկնագորային գործունեության հետ կապված հարաբերությունները :

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող թիկնագորային գործունեության վրա:

Օտարերկրյա իրավաբանական անձինք Հայաստանի Հանրապետության տարածքում իրավունք չունեն զբաղվել թիկնագորային գործունեությամբ:

Հոդված 3. Հիմնական հասկացություններ

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

թիկնագորային գործունեություն՝ լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է թիկնագորային կազմակերպության կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ սույն օրենքով նախատեսված թիկնագորային ծառայություններ մատուցելու միջոցով ,

թիկնագորային գործունեություն իրականացնող իրավաբանական անձ (այսուհետ՝ թիկնագորային կազմակերպություն)՝ արեւտրային կազմակերպություն, որն ունի թիկնագորային գործունեություն իրականացնելու լիցենզիա եւ մատուցում է բացառապես թիկնագորային ծառայություններ,

պահապան (պահնորդ)՝ ՀՀ քաղաքացի, որը պահապան (պահնորդ) աշխատելու համար ունի սույն օրենքով նախատեսված որակավորում, աշխատանքային պայմանագրով աշխատում է թիկնագորային կազմակերպությունում, օրենքով սահմանված կարգով ստացել է քաղաքացիական զենք (այսուհետ՝ զենք), հատուկ միջոցներ պահելու եւ կրելու թույլտվություն :

թիկնապահ՝ ԶՅ քաղաքացի, որն ունի պահպանվող անձանց կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում, սույն օրենքով նախատեսված կարգով թիկնազորային կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով իրականացնում է պահպանվող անձի կյանքի եւ առողջության պաշտպանություն (այդ թվում նաեւ զենքի օգտագործմամբ), օրենքով սահմանված կարգով ստացել է քաղաքացիական զենք, հատուկ միջոցներ պահելու եւ կրելու թույլտվություն :

պահպանվող անձ (պատվիրատու)՝ ֆիզիկական անձ, որը թիկնազորային կազմակերպության հետ պայմանագիր է կնքել իր կյանքի եւ առողջության պաշտպանություն իրականացնելու ծառայություններ մատուցելու մասին ,

պահպանվող օբյեկտ՝ պատվիրատուի ու թիկնազորային կազմակերպության միջեւ կնքված պայմանագրի համաձայն պահպանության ենթակա գույք ,

թիկնազորային ծառայություններ՝ պահպանվող ֆիզիկական անձանց եւ օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջություն ,

անվտանգության ծառայություն՝ կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություն) գործող ստորաբաժանում, որը տվյալ կազմակերպության անվտանգության շահերից ելնելով իրականացնում է սույն օրենքով սահմանված գործունեություն ,

անցագրային ռեժիմ՝ պահպանվող օբյեկտ մուտք (ելք) գործելու եւ օբյեկտի ներսում գտնվելու համար սահմանված կարգ, որն ապահովվում է այնպիսի միջոցառումների ու կանոնների ամբողջությամբ, որոնք բացառում են անձանց, տրանսպորտային միջոցների, գույքի անվերահսկելի մուտքը (ելքը) պահպանվող օբյեկտ :

Յոդված 4. Թիկնազորային գործունեության իրականացման իրավական հիմքերը

Թիկնազորային գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, սույն օրենքին, այլ օրենքներին ու իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

Յոդված 5. Թիկնազորային գործունեության սկզբունքները

Թիկնազորային գործունեությունն իրականացվում է օրինականության, օրենքի առջեւ բոլորի հավասարության, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը հարգելու եւ պահպանելու, պահպանվող ֆիզիկական անձի ու օբյեկտի պաշտպանությունը առավել հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքների հիման վրա:

Յոդված 6. Թիկնազորային գործունեության նպատակը

Թիկնազորային գործունեությունն իրականացվում է հետեւյալ նպատակներով՝

- ա) իրավաբանական անձանց տնտեսական, մտավոր սեփականության անվտանգության ապահովում,
- բ) ֆիզիկական անձանց եւ օբյեկտների պաշտպանություն,
- գ) պահպանվող օբյեկտներում անցագրային ռեժիմի ապահովում,

Յոդված 7. Թիկնագորային գործունեության լիցենզավորումը

- 1. Թիկնագորային գործունեության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով նախատեսված առանձնահատկությունները:
- 2. Թիկնագորային գործունեության համար տրվում է բարդ ընթացակարգով լիցենզիա:

Թիկնագորային գործունեության լիցենզիայի գործողության ժամկետը հինգ տարի է:

- 3. Թիկնագորային գործունեությամբ զբաղվելու լիցենզիան տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին), որը հսկողություն է իրականացնում նաեւ լիցենզիա ստացած կազմակերպությունների կողմից լիցենզիայի պայմանները եւ պահանջները պատշաճ կատարելու նկատմամբ:
- 4. Թիկնագորային գործունեության համար լիցենզիայի տրամադրումը, վերաձեւակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը, կասեցումը կամ դադարեցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

Յոդված 8. Թիկնագորային գործունեություն իրականացնելիս զենք ձեռք բերելու համար տրվող լիցենզիան, զենք հատուկ կամ տեխնիկական միջոցներ պահելու եւ կրելու համար տրվող թույլտվությունը

- 1. Թիկնագորային կազմակերպություններին թույլատրվում է ձեռք բերել միայն «Չենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քաղաքացիական համարվող զենք :
- 2. Թիկնագորային կազմակերպություններին զենք ձեռք բերելու լիցենզիայի, զենք պահելու ու կրելու թույլտվության տրամադրումը, ինչպես նաեւ այդ զենքի գրանցումն իրականացվում է «Չենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար նախատեսված պայմաններով ու կարգով:
- 3. Թիկնագորային կազմակերպությունների աշխատողներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն եւ լիազոր մարմնից ստացել են զենք պահելու ու կրելու թույլտվություն:
- 3. Թիկնագորային գործունեության ընթացքում կիրառման ենթակա հատուկ կամ տեխնիկական միջոցների տեսակները, ձեռքբերման, գործադրման ու հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Թիկնագորային գործունեությունն իրականացնելիս հատուկ կամ տեխնիկական միջոցներն օգտագործվում են սույն օրենքով սահմանված կարգով եւ դեպքերում:

Հոդված 9. Թիկնագորային գործունեության իրականացումը

1. Սույն օրենքով նախատեսված թիկնագորային գործունեություն կարող են իրականացնել օրենքով սահմանված կարգով գրանցված եւ համապատասխան լիցենզիա ստացած թիկնագորային կազմակերպությունները:

2. Թիկնագորային գործունեությունն իրականացնելիս թույլատրվում է մատուցել հետեւյալ ծառայությունները.

ա) պահպանվող անձանց կյանքի եւ առողջության պաշտպանություն (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ),

բ) սեփականության կամ օգտագործման իրավունքով անձին պատկանող անշարժ եւ շարժական գույքի պահպանություն,

գ) պահպանվող օբյեկտներում անցագրային եւ ներօբյեկտային ռեժիմների ապահովում,

դ) անվտանգության եւ հրդեհային ազդանշանային միջոցների ու համակարգերի նախագծման, տեղադրման եւ շահագործման աշխատանքների իրականացում,

ե) պատվիրատուի իրավունքների եւ օրինական շահերի, ինչպես նաեւ ֆիզիկական ու իրավաբանական անձանց մտավոր սեփականության պաշտպանության հետ կապված հարցերով խորհրդատվության մատուցում:

3. Թիկնագորային ծառայություններ մատուցելիս թիկնապահները (պահապանները) կարող են ունենալ ծառայողական համազգեստ, որի նմուշները համաձայնեցվում է միազոր մարմնի հետ:

4. Թիկնագորային կազմակերպության ղեկավարները եւ թիկնապահները (այսուհետ նաեւ պահապանները) իրավունք չունեն թիկնագորային գործունեության հետ չկապված պաշտոններ զբաղեցնել այն կազմակերպություններում, որոնց հետ թիկնագորային կազմակերպությունը կնքել է թիկնագորային ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր: Սույն պահանջի չկատարումը կարող է հիմք ծառայել թիկնագորային կազմակերպությանը թիկնագորային գործունեության լիցենզիայից զրկելու համար:

Հոդված 10. Թիկնագորային ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը

Թիկնագորային կազմակերպության եւ պատվիրատուի միջեւ թիկնագորային ծառայություններ մատուցելու մասին պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի եւ սույն օրենքի պահանջներին համապատասխան:

Հոդված 11. Թիկնագորային գործունեության իրականացման սահմանափակումները

Թիկնագորային գործունեություն չեն կարող իրականացնել՝

ա) 18 տարեկանը չլրացած քաղաքացին .

բ) պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած, ինչպես նաև այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացին.

գ) բուժհիմնարկներում հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառման կանգնած քաղաքացին.

դ) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն համար դատապարտված քաղաքացին,

ե) հանցագործության կատարման մեջ մեղադրվող քաղաքացին (մինչև օրենքով սահմանված կարգով նրա մեղավորության հարցի լուծումը):

Չորված 12. Թիկնապահը

1. Թիկնագորային կազմակերպությունում աշխատանքային պայմանագրով թիկնապահ աշխատելու համար քաղաքացին, որի պարտականությունների մեջ է մտնում սույն օրենքի 9 հոդվածի երկրորդ մասով նախատեսված ծառայությունների մատուցումը, պարտավոր է ներկայացնել դիմում, ինչպես նաև համապատասխան որակավորումը հավաստող փաստաթուղթ:

Չորված 13. Թիկնապահի իրավունքները

1. Թիկնապահը իր գործառույթային պարտականությունները կատարելիս իրավունք ունի՝

ա) վնասագերծել պահպանվող անձի կամ օբյեկտի, ինչպես նաև իր նկատմամբ ոտնձգություն կատարած անձին եւ անհապաղ վերջինիս հանձնել իրավապահ մարմիններին,

բ) պահպանվող օբյեկտի պաշտոնատար անձանցից, աշխատակիցներից եւ այլ անձանցից պահանջել անցագրային ու ներօբյեկտային ռեժիմների պահպանում,

գ) պահպանվող օբյեկտում անցագրային ռեժիմի պայմաններն ապահովելիս, իր իրավասության շրջանակներում եւ թիկնագորային ծառայություններ մատուցելու մասին պայմանագրին համապատասխան, իրականացնել քաղաքացիների անձնական զննություն, նրանց մոտ գտնվող առարկաների զննում, անձը հաստատող, ինչպես նաև պահպանվող օբյեկտ հետիոտն կամ տրանսպորտային միջոցով մուտք (ելք) գործելու, գույք տեղափոխելու վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրություն,

դ) իրականացնել պահպանվող օբյեկտ մուտք (ելք) գործող տրանսպորտային միջոցների զննում,

ե) օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով կիրառել ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ:

2. Թիկնապահի կողմից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց օրինական իրավունքների եւ ազատությունների խախտումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Չորված 14. Թիկնապահի գործունեության իրականացման սահմանափակումները

Իր գործառնության չափերը պարտականությունները կատարելիս թիկնապահներին արգելվում է՝

ա) իրավապահ մարմիններից թաքցնել ծառայողական գործունեության ընթացքում իրեն հայտնի դարձած նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների մասին տեղեկություններ,

բ) կատարել քաղաքացիների իրավունքները եւ ազատությունները ոտնահարող, ինչպես նաեւ կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունն ու գույքը վտանգող գործողություններ,

գ) հրապարակել ծառայողական գործունեության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները կամ դրանք անօրինական օգտագործել իր կամ այլ անձի շահերից ելնելով,

դ) իրեն կցված հատուկ կամ տեխնիկական միջոցները, զենքը, դրանք կրելու թույլտվությունը, թիկնապահի վկայականը փոխանցել այլ անձանց:

Չորված 15. Թիկնապահի կողմից իր գործողությունների վերաբերյալ հաղորդագրություններ կայացնելը

1. Թիկնապահը պահպանվող անձի, պահպանվող գույքի կամ օբյեկտի, պահպանության աշխատակիցների, ինչպես նաեւ իր նկատմամբ իրավախախտումը կանխելիս, իրավախախտներին վնասագերծելիս կամ քաղաքացիների կյանքին, առողջությանը եւ գույքին ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ զենքի կիրառմամբ վնաս հասցնելու դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին եւ թիկնագորային կազմակերպության ղեկավարին՝ նշելով դրա ժամանակի, վայրի, հանգամանքների ու դրա հետ կապված իր գործողությունների մասին:

Չորված 16. Ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելու հիմքերը, պայմանները եւ սահմանները

1. Իր գործառնության չափերը պարտականությունները կատարելիս թիկնապահը ֆիզիկական ուժ, զենք, հատուկ կամ տեխնիկական միջոցներ գործադրելու իրավունք ունի միայն անհրաժեշտ պաշտպանության եւ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում, ինչպես նաեւ ոտնձգություն կատարած անձին վնասագերծելիս՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով :

2. Թիկնապահները լիազոր մարմնի սահմանած կարգով պարտավոր են անցնել հատուկ պատրաստություն, ինչպես նաեւ պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու պիտանիությունը որոշող ստուգումներ:

3.Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ/կամ հրազենի գործադրման ընտրությունը կատարելիս թիկնապահը առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, ոտնձգության բնույթից եւ արարքը կատարող անձից, ղեկավարվելով պահպանվող օբյեկտի ու ֆիզիկական անձի պաշտպանությունը առավել հուսալի եւ անվտանգ եղանակով իրականացնելու սկզբունքով :

4. Թիկնապահը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցների եւ/կամ հրազեն գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով իր օրինական պահանջները կատարելու եւ ոտնձգությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում պահպանվող անձի կամ իր կյանքի ու առողջության համար, կամ կարող է առաջացնել այլ ծանր հետեւանքներ, կամ երբ ստեղծված իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Թիկնապահը պարտավոր է նաեւ՝

ա) ելնելով ոտնձգության բնույթից՝ ձգտել, որպեսզի ոտնձգություն կատարած անձին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի,

բ) անհապաղ ապահովել (ցուցաբերել) առաջնային բուժօգնությամբ այն անձանց, ում առողջությանը պատճառվել է վնաս,

գ) ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ/կամ հրազենի գործադրմամբ անձին պատճառած մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնի տվյալ վայրի ստորաբաժանմանը եւ իր վերադասին :

Օրենքով չնախատեսված դեպքերում թիկնապահի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ/կամ հրազենի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով :

Չորված 17. Ֆիզիկական ուժի գործադրումը

Թիկնապահը իրավունք ունի ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ, ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ) գործադրել պահպանվող անձի եւ/կամ օբյեկտի նկատմամբ ոտնձգությունը կանխելիս, դրանք կատարած անձանց վնասազերծելիս, ինքնապաշտպանության, ինչպես նաեւ այն դեպքերում, երբ առանց ֆիզիկական ուժ գործադրելու չի ապահովվի իր գործառնության իր պարտականությունների օրինական եւ իրավաչափ կատարումը:

Չորված 18. Հատուկ միջոցների գործադրումը

1. Թիկնապահը հատուկ միջոցներ կարող է գործադրել հետեւյալ դեպքերում.

ա) իր կամ պահպանվող անձի կյանքին եւ առողջությանն անմիջականորեն սպառնացող հարձակումը խափանելիս,

բ) իր կամ պահպանվող անձի (գույքի) դեմ ուղղված հարձակումը կանխելիս, երբ հարձակվողը ֆիզիկական դիմադրություն է ցույց տալիս,

գ) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը կանգնեցնելու անհրաժեշտությունից ելնելով, եթե վարորդը չի կատարում մեքենան կանգնեցնելու վերաբերյալ պահապանի օրինական պահանջը,

դ) թիկնապահի հատուկ միջոցներին տիրանալու փորձը կանխելիս:

2. Թիկնապահը կարող է գործադրել հետևյալ հատուկ միջոցները՝

ա) ձեռնաշղթաներ, արցունքաբեր գազ, ռետինե մահակներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի ա), բ) եւ դ) կետերով նախատեսված դեպքերում,

բ) տրանսպորտի հարկադիր կանգնեցման միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի գ) կետով նախատեսված դեպքերում :

3. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, հաշմանդամների, անչափահասների նկատմամբ, եթե նրանց տարիքն ակնհայտ է կամ հայտնի է թիկնապահին:

4. Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում հատուկ միջոցների բացակայության դեպքում թիկնապահը իրավունք ունի օգտագործել ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները :

Յոդված 19. Յրազենի գործադրումը (կիրառումը) եւ օգտագործումը

1. Թիկնապահը իրավունք ունի զենք գործադրել հետևյալ դեպքում՝

անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում՝ իր կամ պահպանվող անձի կամ պահպանվող օբյեկտի վրա կատարվող վտանգավոր, խմբակային կամ այլ զինված հարձակումը կանխելիս, եթե զենք չգործադրելը կարող է անմիջական վտանգ ստեղծել նրա, պահպանվող անձի կյանքի եւ առողջության կամ պահպանվող գույքի համար,

2. Թիկնապահը իրավունք ունի հրազեն օգտագործել հետևյալ դեպքերում՝

ա) պահպանվող օբյեկտ մուտք գործելու փորձ կատարող տրանսպորտային միջոցը վնասելով կանգնեցնելիս, եթե վարորդը չի կատարում մեքենան կանգնեցնելու վերաբերյալ պահապանի օրինական պահանջը,

բ) մարդկանց կյանքին եւ առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասագործելիս,

գ) թիկնապահի զենքին տիրանալու փորձը կանխելիս,

դ) զենք օգտագործելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

3. Արգելվում է հրազենի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների եւ անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, թիկնապահի կամ պահպանվող անձի կյանքին եւ առողջությանը, պահպանվող օբյեկտի անվտանգությանը սպառնացող զինված կամ խմբակային այլ հարձակումը կանխելու դեպքերի):

4. Չենքի յուրաքանչյուր գործադրման դեպքում թիկնապահը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել տվյալ վայրի լիազոր մարմնի ստորաբաժանմանը եւ իր վերադասին:

5. Թիկնազորային ծառայություններ մատուցելիս օգտագործվող քաղաքացիական զենքի տեսակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Արգելվում է թիկնազորային ծառայություններ մատուցելիս օգտագործել հրազենի կամ դրա զինամթերքի այնպիսի տեսակներ, որոնք պատճառում են առավել ծանր վնասվածքներ կամ չարդարացված ռիսկի աղբյուր են :

Չորված 20. Տեխնիկական միջոցների կիրառումը

1. Թիկնազորային գործունեություն իրականացնելիս տեխնիկական միջոցների կիրառումը չպետք է խախտի այլ անձանց օրինական իրավունքներն ու ազատությունները, վնաս հասցնի նրանց կյանքին եւ առողջությանը, շրջակա միջավայրին:

Արգելվում է այնպիսի տեխնիկական միջոցների կիրառումը, որոնք նախատեսված են տեղեկությունների ոչ հրապարակային հավաքման ու ձեռքբերման համար եւ որոնք օգտագործումը սահմանափակված էօրենքով ու այլ իրավական ակտերով:

2. Թիկնազորային գործունեություն իրականացնելիս թույլատրվում է օգտագործել ռադիոհաճախականության տիրույթներ, որոնք տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Չորված 21. Թիկնապահների մասնագիտական (հատուկ) ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը եւ որակավորման բարձրացումը

1. Թիկնապահների մասնագիտական (հատուկ) ուսուցումը, վերապատրաստումը, որակավորումը եւ որակավորման բարձրացումը իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները:

Նշված հաստատությունների լիցենզավորումը, կրթական ծրագրի հաստատումը եւ գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականանում է լիազոր մարմինը՝ օրենքով ու այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2. Թիկնազորային կազմակերպության ղեկավարների, թիկնապահների վերապատրաստումը եւ որակավորման ստուգումը իրականացվում է հինգ տարին մեկ անգամ:

Չորված 22. Թիկնապահների սոցիալական պաշտպանվածությունը

Թիկնապահները համապատասխան թիկնազորային կազմակերպության միջոցների հաշվին ենթակա են պարտադիր ապահովագրության՝ իրենց գործունեությունն իրականացնելիս մահվան, խեղման կամ առողջությանը պատճառված այլ վնասի դեպքում:

Չողված 23. Թիկնապահների իրավական պաշտպանվածությունը

Թիկնապահը չի կարող հետապնդվել եւ պատասխանատվության ենթարկվել օրենքով սահմանված պարտականություններին ու իր իրավասության սահմաններին համապատասխան իրականացրած գործողությունների համար:

Թիկնազորային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս դիմադրություն ցույց տալը, սպառնալիքը կամ բռնությունն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

Չողված 24. Վերահսկողությունը թիկնազորային գործունեության նկատմամբ

Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնազորային գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է լիազոր մարմինը:

Թիկնազորային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի պաշտոնատար անձինք իրավունք ունեն նշված մարմիններից պահանջել համապատասխան փաստաթղթեր եւ ստանալ գրավոր կամ բանավոր տեղեկություններ:

Չողված 25. Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար

Սույն օրենքի խախտումը առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

Չողված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« Թիկնազորային (պահնորդական) գործունեության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին», «Լիցենզավորման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո նոր տնտեսական հարաբերությունների ձևավորումը հանգեցրեց հասարակության մեջ այնպիսի իրական պահանջարկի առաջացմանը, ինչպիսին է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, գույքի ոչ պետական պաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը:

Գաղտնիք չէ, որ նման գործունեությունն արդեն իսկ իրականացվում է, ներառյալ՝ զենքի օգտագործմամբ, իսկ համապատասխան օրենսդրական կարգավորման բացակայությունը հնարավորություն չի տալիս պատշաճ հսկողություն սահմանել այդպիսի գործունեության նկատմամբ, ինչը գործնականում հանգեցնում է որոշակի բացասական դրսեւորումների:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի ոչ պետական պաշտպանության իրականացման գործընթացը կարգավորող օրենքի նախագծի ընդունումը կնպաստի իրավակարգի պահպանության եւ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, հնարավորություն կընձեռնի իրավական կարգավորման ենթարկել թիկնազորային գործունեությունը, անհրաժեշտ երաշխիքներ կստեղծի դրա իրականացման գործընթացում օրինականության ապահովման համար:

Ներկայացվող օրենքների նախագծերի փաթեթը նպատակ ունի՝

ապահովել միասնական պետական քաղաքականությունը թիկնազորային գործունեության ոլորտում,

օրենքով ամրագրել թիկնազորային գործունեության իրավական հիմքերը, սկզբունքները եւ այդ ոլորտում իրականացվող իրավահարաբերությունները :

Վերը նշված հրողության եւ պահանջմունքների հիման վրա է մշակվել «Թիկնազորային (պահնորդական) գործունեության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը :

Չեղիճակներ՝ [Արթուր Աղաբեկյան](#), [Վահան Յովհաննեսյան](#), [Յրայր Կարապետյան](#), [Միքայել Մանուկյան](#)